25.798

# ԾՐԱԳԻՐ

## 1929-30 ԹՎԻ

# ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՅՐԵՐԻ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԽՄԲԱԿԻ

Հրատարակություն „Հայկոոպի“

ԵՐԵՎԱՆ 1929 թ.

15 MAY 2013
25.798

## ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԽՄԲԱԿԸ

1) Կազմը լինելու յե 30—35 հոգի։
2) Ամսվա մեջ ունենալու յե 5 պարապմունք, յերկուական ակադեմ. ժամով. (ակ. ժամը հաշվում ե 45 րոպե)։
3) Պարապմունքները սկսվելու յեն դեկտեմբերի 1-ից և վերջանալու յեն մարտի 1-ին։
4) Խմբակավարներին կարելի յե վճարել 14 պարապմունքի համար 42 ռուբլի։ Խմբակի բոլոր ծախսը կարող ե լինել մինչև 70 ռուբլի։
5) Խմբակը կազմվում ե կոոպերատիվի ակտիվ ընկերներից։

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. № 2858բ.
ՏԻՐԱԺ 6001

ՄՇԱԿՎԱԾ Ե ՑԵՆՏՐՈՍՈՅՈՒԶԻ ԿՈՒԼՏ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

15 JAN 2010
334
Բ-92

# ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

## ՄԱՍ I.

Սոցիալիզմի կառուցման հիմնական խնդիրները—յերկրի ինդուստրացումը և գյուղատնտեսության կոլլեկտիվացումը։ Ժողովրդական տնտեսության զարգացման պլանը։ Աջերի սխալները սոցիալիզմի կառուցման ուղիների գնահատման խնդրում։

### ԶՐՈՒՅՑ 1.

Կոոպերացիան և սպառ. ընկերությունները վորպես հասարակական — տնտեսական կազմակերպություն։ Բանվորական կոոպերացիայի նշանակությունը գների իջեցման և աշխատավարձի իրական բարձրացման խնդրում։ Կոոպերացիայի դերը կոմունիստական կենցաղի համար մղվող պայքարում։ Խորհրդային սպառ. կոոպերացիայի նվաճումները։ Կոոպերատիվ աշխատանքի թերությունները։ Բանվորական կոոպերացիայի

12428-57

ներքական խնդիրները: Զարգացման հնգամյա պլանը՝ Կուսակցության վորոշումները կոոպերացիայի մասին:

## ԶՐՈՒՅՑ 2-ՐԴ

### Բանվորական սպառողական ընկերությունը յեվ նրա վարչական ու ղեկիչ մարմինները

*ՍՍՀՄ-ում ինչպես են կառուցված սպառողական ընկերությունները:*

*Բանվորական կոոպերատիվի ղեկավար մարմինները: Ընդհանուր ժողովը և լիազորների ժողովը, լիազորների ժողովի աշխատանքի կարգը: Անդամների շրջանային ժողովը: Հաշվետու—ընտրական ժողովների նշանակությունը:*

*Վարչությունը: Վարչությունը վորպես գործադիր մարմին: Վարչության աշխատանքի կարգը: Վարչության աշխատանքային ապարատը, ապարատի առանձին մասերի կառուցվածքը: Բանկոոպի ծառայողները: Կոմկուսի բջիջի և տեղկոմի դերը:*

*Վերստուգիչ հանձնաժողովը: Նրա դերը հսկողության գծով: Վերստուգիչ հանձնաժողովների խնդիրները: Վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքի կարգը:*

## ԶՐՈՒՅՑ 3-ՐԴ

### Կոոպերատիվ հասարակության նշանակությունն ու ձեվերը

*Մասսաների ինքնագործունեության դերը կոոպերատիվ աշխատանքների մեջ:*



*Կոոպերատիվ ակտիվը: Բանկոոպների լիազորները և նրանց աշխատանքը: Կոոպերատիվ ակտիվը ձեռնարկություններում, կոոպերատիվ կազմակերպիչները: Գործարկոմ—տեղկոմների կոոպերատիվ հանձնաժողովները: Կոոպերատիվ ակտիվը քաղաքային չը կազմակերպված ազգաբնակության մեջ: Խանութային հանձնաժողովներ:*

*Կոոպերատիվ հասարակայնության զարգացման ուղիները փայատերերի վողջ մասսայի շրջանում: Ինքնագործունեությունը և այլ. միջոցները վորպես հիմնական մեթոդ հասարակայնության ուժեղացման: Յերիտասարդության ներգրավումը կոոպերատիվ շինարարության մեջ և կոոպերատիվ կազմակերպիչները կոմյերիտական բջիջներում: Կոոպերատիվ աշխատանքը կանանց մեջ և կոոպերատիվ սեկցիաները բանվորուհիների պատգամավորական ժողովներում:*

*Կոոպերատիվ — լուսավորության աշխատանքը: Գրավաճառային աշխատանքը: Բանվորական ակումբները, վորպես բանկոոպների լուսավորության կենտրոններ: Փոխհարաբերությունները պրոֆմիությունների հետ:*

*Բանկոոպների կազմակերպչական և կոոպերատիվ—լուսավորության բաժինները:*

## ԶՐՈՒՅՑ 4-ՐԴ

### Բանվորական սպառողական ընկերության աշխատանքը—ապրանքների ընտրությունը յեվ մթերումը

*Կոմկուսի XV համագումարը բանվոր դասակարգի խնդիրների մասին փոխանակության կազմակերպ-*

*ման ասպարեզում։ Պլանավորումը կոոպերատիվ ապարատի աշխատանքում, վորպես հիմնական պայման նրա ռացիոնալացման և եժանացման։ Առևտրական պլանը և նրա հիմնական մասերը։*

*Ի՞նչպես պիտի լինի բանկոոպի ապրանքային տեսակավորումը։ Փայատեր մասսաների մասնակցությունը տեսակավորման կազմակերպման աշխատանքում։ Սեզոնային ապրանքներ։ Բանվորական կոոպերացիայի փաստացի տեսակավորումը և նրա՝ բանվոր ընտանիքի բյուջեյի համապատասխանության աստիճանը։ Գյուղատնտեսական մթերքների աշխատանքների ուժեղացման ուղիները։ Գյուղատնտեսական մթերքների կոնտրակտացիան։ Կոոպերատիվ բանջարանոցների և կաթնային ֆերմաների ընդարձակումը։ Ապրանքային պաշարները։*

*Կոոպերատիվ Միությունները վորպես վողջ կոոպերացիայի մթերման աշխատանքների միավորման միջոց։ Գենպայմանագրերը և նախնական պատվերները։ Ապրանքների մթերման այլ ձևերը։ Ապրանքների պլանային ներմուծումները։*

## ԶՐՈՒՅՑ 5-ՐԴ

### Բանվորական սպառողական ընկերության առեվտրական աշխատանքը—գների քաղաքականությունը յեվ ապրանքների գնանշումը

*Խորհրդային իշխանության գների քաղաքականությունը և կոոպերացիան։*

*Ինչպես ե կազմվում վաճառքի գինը, գնման*



*արժեքը, վերադիր ծախքերը, ինքնարժեքը, հավելումը ինքնարժեքին և վաճառքի գինը։ Առևտրա-կազմակերպչական ծախքերը և նրանց մեծությունը։ Յեկամուտների-ծախսերի նախահաշիվը։ Վաստակի մեծությունը։ Ապրանքների առանձին գրուպաների հավելումները ինքնարժեքին։ Առավելագույն հավելումները։*

*Սպառողական կոոպերացիայի ծառայության արժեքն ազգաբնակչության համար։*

## ԶՐՈՒՅՑ 6-ՐԴ

### Բանվորական սպառողական ընկերության առեվտրական գործունեությունը՝ ապրանքների վաճառքը

*Ինչումն ե կայանում ապրանքների վաճառման աշխատանքի կանոնավորումը։ Խանութային հանձնաժողովի դերը բանկոոպների առևտրական աշխատանքի լավացման խնդրում։*

*Կոոպերատիվ խանութների կազմակերպումը և աշխատանքը—ինչպես պետք ե լինի խանութի շենքը, կյոսկերը, խանութի կահավորումը, ինչպես ե խանութը մատակարարվում ապրանքներով, ապրանքների պահպանումը, խանութի մաքրումը, ապրանքների բաց թողումը—կշռելը, փաթաթելը, ծախու գները։ Կոոպերատիվների սպասարկման կարգը անդամներին և չը կոոպերացված բնակչությանը։ Սպասարկման առավելությունները անդամներին։ Գնման գրքույկը և նրա նշանակությունը։ Բանվորական վարկավորումը, ապ-*

րանքների հաշվառումն ու ստուգումը, ապրանքների բնական պակասումը:

Խանութային հանձնաժողովների աշխատանքների կարգը:

## ԶՐՈՒՅՑ 7-ՐԴ

### Բանվորական սպառողական ընկերության արդյունաբերական յեվ կենցաղային գործունեյությունը

*Կոմկուսի XV համագումարը աշխատավոր մասսաներին հասարակական աշխատանքների մեջ քաշելու ուժեղացման անհրաժեշտության մասին: Մասսաների կենցաղի անկազմակերպ լինելը, վորպես գլխավոր արգելակներից մեկը մասսաներին հասարակական աշխատանքների մեջ քաշելու գործում: Կենցաղի կոլլեկտիվացումը վորպես նրա րացիոնալացման միջոց:*

*Բանվորական կոոպերացիայի դերը կենցաղի կոլլեկտիվացման խնդրում: Կոոպերացիայի կենցաղային աշխատանքի ձևերը—հաց թխելը, արտադրական գործունեյությունը, հասարակական սնունդը: Նրա թերությունները և նրանց վերացումը: Ճաշարանային հանձնաժողովները և նրանց անելիքները: Կոոպերացիայի մասնակցությունը յերեխաների հասարակական դաստիարակության գործում, «ամեն ինչ մոր և մանկան համար» անկյունները: Կոոպերացիայի կենցաղային աշխատանքի ուժեղացման ուղիները:*

---



## ԶՐՈՒՅՑ 8-ՐԴ

### Բանվորական սպառողական ընկերության միջոցները

*Սեփական միջոցներ: Անդամների մուծումները վորպես հիմք կոոպերատիվ միջոցների: Մուտքի վճարներ: Փայավճարներ, նրանց վճարելու ժամկետները և գանձման կարգը: Դիֆերենցիալ փայը: Փայադրամագլուխը և նրա մեծացման անհրաժեշտությունը: Հիմնական դրամագլուխ:*

*Փոխառու միջոցներ: Փոխառու միջոցների նշանակությունը բանկոոպների աշխատանքում: Ինչով է վորոշվում կոոպերատիվների ստանալիք վարկերի մեծությունը: Վորքան վարկ ունի բանվորական կոոպերացիան: Ավանդներ հավաքելու աշխատանքի ուժեղացման անհրաժեշտությունը: Ինչպես պետք է օգտվել վարկերից:*

*Սեփական և փոխառու միջոցների փոխհարաբերությունը:*

*Միջոցների օգտագործումը: Բանկոոպները վորտեղ են ծախսում իրենց միջոցները: Շրջանառու և անշարժ միջոցներ: Նրանց փոխհարաբերությունը: Շրջանառու դրամագլուխ և նրա շրջանառության արագությունը:*

## ԶՐՈՒՅՑ 9-ՐԴ

### Ինչպես յուրացնել բանվորական կոոպերատիվի հաշվետվությունը

*Հաշվետվության նշանակությունը բանկոոպների աշխատանքում: Հաշվառումը վորպես հասարակական*

հսկողության միջոց։ Հաշվապահական հաշվետվություն և հաշվետվություն փայատերերի համար։

Վերլուծում հաշվետվության, կազմակերպչական հարցեր—անդամների կոոպերացումը և աճումը, կոոպերատիվ հասարակության հարցեր, կուլտ լուսավորական աշխատանք, ֆինանսական դրություն—կոոպերատիվի միջոցները և ինչպես է նա օգտագործում այդ միջոցները, փոխհարաբերությունը սեփական և փոխառու միջոցների նկատմամբ, փայադրամագլուխ, վաստակ, փոխհարաբերությունը շրջանառու և անշարժ միջոցների, ինչ աղբյուրներից է կազմվում շրջանառու դրամագլուխը, առևտրական աշխատանքը—շրջանառության չափը, ապրանքային տեսակավորումը, ապրանքների հայթայթման աղբյուրները, առևտրական ծախքերը և հավելումները, առևտրական ցանցը, մատակարարումը անդամներին և ոչ անդամներին, փայատերերի նյութական շահագրգռությունը, կենցաղային և արտադրական աշխատանքներ։

## ԶՐՈՒՅՑ 10-ՐԴ

## ՍՀԽՄ սպառողական կոոպերացիայի սիստեմը

Ինչու համար սպառողական ընկերությունները համախմբվում են Միության մեջ։ Միությունները որպես միջոց է մի ձուլելու ՍԽՀՄ բանվորա-գյուղացիական սպառողական կոոպերացիան։ Միության կանոնադրության հիմնական կետերը։ Ինչպես են կազմակերպվում Միությունները։ Ինչպես է ընթա-



նում ապրանքամատակարարումը Միութենական սիստեմում։

Բանվորական կոոպերացիայի Միութենական համախմբումը (բանվորական կոոպերացիայի սեկցիաները)։ Կենտր. Բանվ. Սեկցիա և Տրանսպորտի Սեկցիա։ Տեղական բանվորական սեկցիաները։

## ԶՐՈՒՅՑ 11-ՐԴ

## Բնակարանային կոոպերացիան ՍԽՀՄ-ում

Բնակարանների նշանակությունը բանվոր դասակարգի կյանքում։ Մեր բնակարանային կրիզիսը որպես կապիտալիզմի ժառանգություն։ Կոմկուսի XV համագումարը բնակարանային հարցի մասին.

Բնակարանային կոոպերացիան և թե ինչպես է նա կառուցված։ Բնակարանա-շինարարական կոոպերացիայի դերն ու նշանակությունը—բնակարանային կոոպերացիայի կուլտուր-կենցաղային և հասարակական դերը։

## ԶՐՈՒՅՑ 12-ՐԴ

## Գյուղատնտեսական կոոպերացիան ՍԽՀՄ-ում

Մեր գյուղատնտեսության վիճակը։ Ինչպես արագացնել գյուղատնտեսության զարգացման տեմպը։ Գյուղացիության շերտավորումը։ Ինչպես վերջ տալ կուլակությանը։ Կոմկուսի XV համագումարը և XVI կոնֆերենցիան մեր անելիքների մասին գյուղատնտեսության ասպարեզում։

Կոոպերացիայի հիմնական խնդիրները գյուղում։

Կոմկուսի XV համագումարը Լենինի կոոպերատիվ պլանի մասին։ Գյուղատնտեսական կոոպերատիվներն ինչպես են տանում վարկային աշխատանքը։ Մատակարարման աշխատանքը գյուղատնտեսական կոոպերացիայում։ Սպառողական կոոպերացիայի աշխատանքը գյուղում։ Գյուղական կոոպերացիայի սպառողական աշխատանքը։ Գյուղի մատակարարող-սպառողականից դեպի արտադրողական կոոպերացումը, փոխանցման ուղիներն ու ձևերը (մասնավորապես կոոպերացիայի ագրիկուլտուրական աշխատանքը)։ Կոլեկտիվ տնտեսություններ։

Գյուղատնտեսական կոոպերատիվների Միությունները։

## ՁՐՈՒՅՑ 13-ՐԴ

### Տնայնանա-արհեստավորական կոոպերացիան ՍՍՀՄ-ում

Խոշոր արդյունաբերության անբավարար զարգացման պատճառները ՍՍՀՄ-ում։ Մանր և տնայնագործական արդյունաբերության նշանակությունը։ Կոմկուսի XV համագումարը մեր հերթական անելիքների մասին՝ մանր և տնայնագործական արդյունաբերության ասպարիզում։

Տնայնագործական արդյունաբերության զարգացման ուղիները կապիտալիզմի կարգերում և խորհրդային պայմաններում։ Տնայնա-արհեստավորական կոոպերատիվների կազմակերպման հիմնական ձևերը։



Տնայնա-արհեստավորական արտելների անդամների իրավունքներն ու պարտականությունները։ Տնայնա-արհեստավորական կոոպերացիայի ստորին ցանցի դրությունը։ Տնտեսական գործունեությունը։ Տնայնագործների կվալիֆիկացիայի բարձրացումը։ Տնայնագործական կոոպերացիայի կուլտ-կենցաղային աշխատանքը։

Տնայնա-արհեստավորական կոոպերատիվների Միությունները։

## ՁՐՈՒՅՑ 14-ՐԴ

### Կոոպերացիայի դերը ՍՍՀՄ-ում յեվ բուրժուական յերկրներում

*ՄԻՋԳԱՅԻՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՇԱՐԺՈՒՄԸ*

Կոոպերացիայի վիճակը կապիտալիստական յերկրներում, բանվորական կոոպերացիայի—սպառողական ընկերություններ կազմակերպելու առաջին փորձերը, Ռոչդելյան ջուլհակները և նրանց սկզբունքները։ Անգլիական սպառողական կոոպերացիայի ներկա վիճակը։ Սպառողական կոոպերացիան Արևմտյան Յեվրոպայի այլ յերկրներում։ Կապիտալիստական յերկրների սպառողական կոոպերացիայի հառաջադիմությունը խորհրդային սպառողական կոոպերացիայի առաջադիմության համեմատությամբ, գյուղատնտեսական կոոպերացիան (օրինակ՝ Գերմանիայում), հիմնական տարբերությունը բուրժուական յերկրների և

խորհրդային գյուղատնտեսական կոոպերացիաների մեջ։ Կոոպերացիայի դերը կապիտալիզմի պայմաններում։ Բուրժուական յերկրների կոոպերատիվ շարժման ղեկավարների մեծամասնության տեսակետը կոոպերացիայի դերի մասին։ Կոմունիստական կուսակցությունների անելիքներն ու աշխատանքը կոոպերատիվ շարժման մեջ՝ կապիտալիզմի պայմաններում։

Միջազգային կոոպերատիվ շարժումը։ Խորհրդային կոոպերացիայի մասնակցությունը միջազգային կոոպերատիվ շարժման մեջ։ Կոմինտերնի կոոպերատիվ սեկցիան։ Միջազգային կոոպերատիվ միությունը։ Խորհրդային կոոպերացիայի մասնակցությունը Միջազգային կոոպերատիվ Միության մեջ։

Միջազգային կոոպերացիայի օրը։

---



## ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ


1. Беседы по рабочей кооперации, издание Центросоюза—1929 г.
2. ԱՆԻՆ.—Սպառկոոպի կազմակերպչականն ու գործնականը, Զակկնիգա—1928 թ.։
3. ՓՈԶՆԸՇԵՎ.—Բանվորական կոոպերացիայի պատմությունը, Հայկոոպ—1929 թ.
4. ԼԻՏՎԱՐԵՎ.—Կոոպերացիայի այբուբեն I—III պր.
5. — Հարցեր ու պատասխաններ, Հայկոոպ։
6. Սպառկոոպերացիան թվերով, Հայկոոպ—1929 թ.։


Վերոհիշյալ գրքերից հանձնարարվում է ունկնդիրներին տալ 2—5 գրքույկները։

---

ՀՀ Ազգային գրադարան
NL0193227

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Անվան
Публичная Библиотека